ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ

«ԵՐԵՎԱՆԻ Ե.ՉԱՐԵՆՑԻ ԱՆՎԱՆ Հ.67 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ»

ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

ՀՀ, 0010, ք.Երևան, Ամիրյան 9, հեռ.՝ (010) 538 780, էլ.փոստ՝ school67@schools.am

Քաղվածք

2022 թվականի օգոստոսի 26-ին կայացած դպրոցի մանկավարժական խորհրդի №1 նիստի արձանագրություն:

Լսեցին. 2022-2023 ուստարվա արտադասարանական աշխատանքների կազմակերպման մասին: Դպրոցի ՄԿԱ գծով տնօրենի տեղակալը ներկայացրեց այն խմբակները, որոնց կազմակերպումը ելնում է երեխաների նախասիրություններից և ծնողների առաջարկություններից:

Մանկավարժական խորհուրդը որոշեց.

2022-2023 ուստարում հաշվի առնելով դպրոցի առանձնահատկությունները, համայնքի կարծիքները, սովորությունների հետաքրքրությունները և ծնողների առաջարկությունները, կազմակերպել ներքոհիշյալ արտադասարանական խմբակները:

Խմբակի անվանում	Ժամաքանակ	Խմբակի ղեկավարի՝ անուն ազգանուն
Մենք քայլում ենք աշխարհի հետ	2	Ռուզաննա Փիլիպոսյան
Ձեռքի վարպետություն	2	Հասմիկ Թումանյան
Երգչախումբ	4	Լուսաբեր Գալստյան
Ճատրակ	2	Հովհաննես Փայտյան
Հայերեն բանավոր խոսքի հմտությունների զարգացում	2	Աշխեն Հովհաննիսյան
Հայագիտություն	2	Նաիրա Թադևոսյան
Գույնի արվեստը	2	Նաիրա Բարսեղյան
Մշակույթի պատմություն	2	Նուարդ Ավետիսյան

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝
ՏՆՕՐԵՆ ՄԱՐԳԱՐԻՏԱ ՍԱՐԳՍՅԱՆ

«ԵՐԵՎԱՆԻ ԵՂԻՇԵ ՉԱՐԵՆՑԻ ԱՆՎԱՆ Հ.67 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ

ՄԵՆՔ ՔԱՅԼՈՒՄ ԵՆՔ ԱՇԽԱՐՀԻ ՀԵՏ

(ԽՄԲԱԿ ԱՆԳԼԵՐԵՆ ԼԵԶՎՈՎ)

2022-2023 ուստարի

ԽՄԲԱԿԻ ԾՐԱԳԻՐ

- ՆՊԱՏԱԿ
- ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ
- ՎԵՐՋՆԱՐԴՅՈՒՆՔ

ՆՊԱՏԱԿ

Ծանոթացնել աշակերտներին ՄԱԿ-ի գիտության, կրթության առաջադիմական գաղափարներին, մոտեցումներին, այլ երկրների համապատասխան կրթական փորձին, իրագործել փորձի փոխանակում ՅՈՒՆԵՍԿՕ-ի ցանցի դպրոցների աշակերտների միջև, առավել մանրամասն ծանոթանալ կազմակերպության տարեկան հոբելյանական միջոցառումներին, ապահովել դրանց մասնակցություն:

ՎԵՐՋՆԱԱՐԴՅՈՒՆՔ

Ձևավորել կայուն և լայն մտահորիզոն ունեցող, կրթված, զարգացած, հազարամյակի մարտահրավերներին ընդառաջ գնացող սերունդ: Նպաստել վերլուծական մտածելակերպ ունեցող, խելացի, հայրենասեր երիտասարդներ:

Weeks	Subject
1	1. International Literacy Day 2. 200th anniversary of the birth of Tserents, writer and publicist (1822-1888)
2	3. International Day of Democracy 4. 100th anniversary of the birth of Ohan Duryan, (1922-2011) Armenian Composer and conductor
3	5. International Day of Peace 6. Day of Independence of the Republic of Armenia
4	7. International Day for the Universal Access to Information 8. 205th anniversary of the birth of Hovhannses Ayvazovski Armenian painter, greatest master of marine art. (1817-1900)
5	9. World Teachers' Day 10. Global Media and Information Literacy Week 11. 125th anniversary of the birth of William Faulkner, American writer, Nobel Prize winner
6	12. International Day of the Girl Child 13. International Year of Creative Economy for Sustainable Development
7	14. International Day for Disaster Reduction 15. International Day for the Eradication of Poverty
8	16. United Nations Day 17. UNESCO
9	18. International Day Against Violence and Bullying at School, including Cyberbullying 19. Social networks: positive and negative trends
10	20. World Science Day for Peace and Development

	21. 105th anniversary of the birth of Indira Gandi Prime Minster of India (1917 – 1984)
11	22. World Philosophy Day 23. 850th anniversary of the death of Nerses the Gracious (Nerses Shnorhali), poet, chronicler, theologian, musician, and translator (1101/2 – 1173)
12	24. International Day for Tolerance 25. International Day for the Elimination of Violence against Women 26. 80th anniversary of Joseph Baiden, 46th President of the USA
13	27. International Day of Persons with Disabilities 28. 355th anniversary of birth of Jonathan Swift, English writer (1667-1745)
14	29. Human Rights Day 30. Universal Declaration on Human Rights
15	31. International Migrants Day 32. 550th anniversary of the birth of Nicolaus Copernicus, astronomer (1473-1543)

շաբաթներ	Թեման
1	1. Գրագիտության միջազգային օր 2. Հայ գրող, հրապարակախոս Ծերենցի 200 ամյակը (1822-1888)
2	3. Ժողովրդավարության միջազգային օր 4. Հայ դիրիժոր, կոմպոզիտոր Օհան Դուրյանի ծննդյան 100-ամյակը(1922-2011)
3	5. Խաղաղության միջազգային օր 6. Հայաստանի Հանրապետության անկախության օր
4	7. Տեղեկատվության համընդհանուր հասանելիության միջազգային օր 8. Աշխարհահռչակ հայ ծովանկարիչ Հովհաննես Այվազովսկու ծննդյան 205-ամյակը (1817-1900)
5	9. Ուսուցիչների համաշխարհային օր 10. Մեդիա և տեղեկատվական գրագիտության համաշխարհային շաբաթ 11. Նոբելյան մրցանանակիր, ամերիկացի գրող Ուիլյամ Ֆոլկների ծննդյան 125-ամյակը
6	12. Աղջիկ երեխայի միջազգային օր 13. Ստեղծագործական տնտեսության միջազգային տարի 'հանուն կայուն զարգացման
7	14. Աղետների նվազեցման միջազգային օ 15. Աղքատության վերացման միջազգային օր
8	16. Միավորված ազգերի կազմակերպության օր 17. ՅՈՒՆԵՍԿՕ
9	18. Դպրոցում բռնության և բռնության դեմ պայքարի միջազգային օր, ներառյալ կիբերհանցագործությունները

	19. Սոցիալական ցանցեր. Դրական և բացասական միտումներ
10	20. Հանուն խաղաղության և զարգացման Գիտության համաշխարհային օր 21. Հնդկաստանի վարչապետ, հայ ժողովրդի մեծ բարեկամ Ինդիրա Գանդիի ծննդյան 105 ամյակը (1917 – 1984)
11	22. Փիլիսոփայության համաշխարհային օր 23. Ներսես Շնորհալիի մահվան 855 տարեդարձը (1101/2 – 1173)
12	24. Հանդուրժողականության՝ միջազգային օր 25. Կանանց նկատմամբ բռնության վերացման միջազգային օր 26. ԱՄՆ 46-րդ նախագահ Ժոզեֆ Բայդենի ծննդյան 80-ամյակը
13	27. Հաշմանդամություն ունեցող անձանց միջազգային օր 28. Անգլիացի գրող, երգիծաբան Ջոնաթան Սֆիֆտի ծննդյան 355-ամյակը (1667-1745)
14	29. Մարդու իրավունքների օր 30. Մարդու իրավունքների հպմընդհանուր հռչակագիր
15	31. Միգրանտների միջազգային օր 32. Նիկոլայ Կոպեռնիկոսի ծննդյան 550-ամյակը (1473-1543)

«ԵՐԵՎԱՆԻ ԵՂԻՇԵ ՉԱՐԵՆՑԻ ԱՆՎԱՆ Հ.67 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ

ԳՈՒՅՆԻ ԱՐՎԵՍՏԸ

2022-2023 ուստար

ԽՄԲԱԿԻ ԾՐԱԳԻՐ

(շաբաթական՝ 2 ժամ, տարեկան՝ 68 ժամ)

Գունանկար (11 ժամ)

Նպատակը-Կնպաստի պատկերվող առարկաների գունային կառուցվածքի, ձևի, ծավալի հեռանկարչական կրճատումների, լուսաստվերների, երանգների ինքնուրույն վերլուծման և պատկերման կարողությունների զարգացմանը:

Խնդիրներ-Ընկալել պատկերվող օբյեկտների ձևը, կառուցվածքը, ծավալը, գույնը, ֆակտուրան, լուսաստվերը, տարածական դիրքը, փոխհարաբերությունները և հեռանկարչական կրճատումները:

Վերջնարդյունք- Ներկայացնել տարածության պատկերման հիմունքները (հեռանկար, հեռավորության վրա օբյեկտների փոքրացում):

Բովանդակություն1.

1. Նատյուրմորտ:(4 ժամ)
2. Թեմատիկ կարչություն: (4 ժամ)
3. Հայտնի ստեղծագործությունների կրկնօրինակում(3 ժամ)

Կոմպոզիցիա (12 ժամ)

Նպատակը-Կոմպոզիցիայի հնարքների, գեղարվեստական ոճաձևերի ստեղծագործաբար կիրառում, կրմպոզիցիայի բոլոր տարրերի համաձայնեցվածություն, կոմպոզիցիոն կենտրոնի շեշտադրում:

Խնդիրներ-« Կոմպոզիցիա » հասկացության լայն ըմբռնում որպես ստեղծագործության թեմայի գեղարվեստական նյութի ձևի և կատարման տեխնիկական հնարքների ամբողջություն:

Վերջնարդյունք- տարբերել նյութերի մշակելու և դրանցով աշխատելու հնարքները, ինչպես նաև պատկերման տարբեր տեխնիկաների ճիշտ կիրառումը սեփական աշխատանքում:

Բովանդակություն

1. Դիմանակր:(4 ժամ)
2. Շենքեր և շինություններ: (4 ժամ)
3. Դեկորատիվ նկարչություն: (4 ժամ)

Պլեներ(Էտյուդ) (14 ժամ)

Նպատակը- Բնության նկատմամբ սիրո և հոգատար վերաբերմունքի դաստիարակում: Տրամադրություն և իրավիճակի արտահայտում գույնի, երանգի, ձևի հատկությունների օգնությամբ:

Խնդիրներ- Պատկերվող առարկաների գունային կառուցվածքի, ձևի, ծավալի, լուսաստվերի, երանգների ինքնուրույն վերլուծման և պատկերման կարեղությունների զարգացում:

Վերջնարդյունքներ- Նկարել բնության տեսարաններ կամ պատկերել հիշողությամբ (կատարված դիտումների և ուսումնասիրությունների հիման վրա):

Բովանդակություն

1. Ճեպանկարներ (2 ժամ)
2. Բնության տեսարաններ: (4 ժամ)
3. Քաղաքային և գյուղական տեսարաններ: (4 ժամ)
4. Էտյուդներ (պլեներ): (4 ժամ)

Զարդանկար (10 ժամ)

Նպատակը- Սովորողները ծանոթացնել զարդանախշի ծագման և հետագա զարգացման պատմությանը, զարդանախշի բազմաթիվ տեսակների և դրանց օգտագործմանը տարբեր ազգերի կերպարվեստում և ճարտարապետության մեջ:

Խնդիրներ- ծանոթացնել նկարազարդման և պատկերազարդման առանձնահատկություններին:

Վերջնարդյունքներ-Պատկերացում կազմել նյութերի և տեխնիկական միջոցների մասին, որոնք օգտագործվում են նկարազարդումների ժամանակ:

Բովանդակություն

1. Կենաց ծառ: (3 ժամ)
2. Զարդանախշերի տեսակներ (կենդանական, բուսական և երկրաչափական ձևերը): (3ժամ)
3. Զարդանախշերի օգնությամբ ձևավորել հեքիաթի գրքերը: (4 ժամ)

Մանրանկարչություն(10 ժամ)

Նպատակը-Սովորողներին ծանոթացնել մանրանկարչության ծագմանը և զարգացմանը: Հայտնի մանրանկարիչների աշխատանքների արտանկարում:

Խնդիրներ- Ընդգծել նկարի կենտրոնը, ընդգծելու եղանակները՝ կոմպոզիցիայի կարևոր մասերի չափերի մեծացում կամ փոքրացում, կենտրոնի ընդգծում լույսի և գույնի միջոցով, գլխավոր հակադրումը երկրորդականին:

Վերջնարդյունքներ- Գաղափար կազմել հայկական մանրանկարչության հետ: Կարողանալ արտանկարել արվեստագետների աշխատանքները և ստեղծել սեփական աշխատանքները:

Բովանդակություն

1. Մանրանկարչություն: (3 ժամ)
2. Հայկական մանրանկարչության կրկնօրինակում (3 ժամ)
3. Ստեղծել սեփական մանրանկարը: (3 ժամ)

Հագուստի մոդելավորում (11 ժամ)

Նպատակը- Ծանոթացնել հագուստի մոդելավորման պատմությանը: Տարբեր ոճերի հագուստների մոդելավորում:

Խնդիրներ- Տեղեկանալ հագուստի մասին, տարբերել ոճերը և ստեղծել սեփական հագուստները:

Վերջնարդյունքներ

- Գաղափար կազմել նորաձևության ոճերի և ուղղությունները մասին:
- Մոդելավորման գործընթաց:
- Նկարել և ստեղծել սեփական հագուստների հավաքածու:

Բովանդակություն

1. Հայկական տարազ: (4 ժամ)
2. Ստեղծել տարբեր ոճի հագուստներ: (4 ժամ)
3. Ծանոթաթանալ այլ երկրների հագուստների հետ և ստեղծել սեփականը: (3 ժամ)

«ԵՐԵՎԱՆԻ ԵՂԻՇԵ ՉԱՐԵՆՑԻ ԱՆՎԱՆ Հ.67 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ

ՃԱՏՐԱԿ

2022-2023 ուստարի

ԽՄԲԱԿԻ ԾՐԱԳԻՐ

Շաբաթական՝ 2ժամ, տարեկան՝ 68 ժամ

. **Նպատակ**
. **Բովանդակություն**
. **Վերջնարդյունք**

1. **Նպատակ.** 2-րդից 4-րդ դասարանների սովորողների մոտ զարգացնել տրամաբանական և ինտելեկտուալ մտածողությունը:
2. **Վերջնարդյունք.** Խթանել սովորողների գիտելիքները, կարողությունները և հմտությունները:

Բովանդակություն

№	Թեմաների անվանումները	Ժամերի թիվը
	Առաջին ծանոթություն շախմատային աշխարհի հետ	1
	Շախմատի խաղադաշտը և նրա առանձնահատկությունները	1
	Շախմատի խաղաքարերը. «Նավակ», «Փիղ», «Թագուհի», «Արքա», «Ձի», «Զինվոր»	3
	Հիմնական մակարդակ. «Հարված խաղաքարերով»՝ վերցնել մրցակցի խաղաքարերը	1
	Հիմնական մակարդակ. «Պաշտպանություն»՝ պաշտպանել սեփական խաղաքարերը	1
	Հիմնական մակարդակ. «Պայքար»՝ հարվածել և պաշտպանել խաղաքարերը	1
	Հիմնական մակարդակ. «Շախ»՝ գրոհել հակառակորդի արքան	1
	Հիմնական մակարդակ. «Ազատվել շախից»՝ պաշտպանել սեփական արքային	1
	Հիմնական մակարդակ. «Մատ մեկ քայլից»՝ ջախջախել մրցակցի արքան	1
	Միջին մակարդակ. «Խաղաքարերի դասավորությունը»՝ շախմատային պարտիայի սկիզբը	1
	Միջին մակարդակ. «Փոխատեղում»՝ արքայի յուրահատուկ քայլը	1
	Միջին մակարդակ. «Կողանցիկ վերցնելը»՝ զինվորի յուրահատուկ քայլը	1
	Միջին մակարդակ. «Պատ»՝ խաղն ավարտվում է ոչ-ոքի	1
	Զարգացած մակարդակ. «Խաղաքարերի արժեքը»՝ գնահատել խաղաքարերի ուժը	1
	Զարգացած մակարդակ. «Շախ երկու քայլից»՝ անել երկու ապահով քայլ շախ տալու համար	1
	Շախ և մատ. «Մատի հիմնական տեսակները - 1»՝ մատ՝ թագուհով և նավակով, երկու նավակով, թագուհով և փղով, թագուհով և ձիով, թագուհով, նավակով:	4
	Շախ և մատ. «Մատային հնարքներ-1»	1
	Շախ և մատ. «Մատային հնարքներ-2»	1

	Շախ և մատ. «Մատային հնարքներ-3»	1
	Շախ և մատ. «Մատային հնարքներ-4»	1
	Շախ և մատ. «Մատի հիմնական տեսակները - 2»	4
	Շախ և մատ. «Մատ ձիով և փղով»	2
	Մատային խնդիրներ. «Մատ 2 քայլից», «Մատ 3 քայլից», «Մատ 4 քայլից»	3
	Մարտավարական հիմնական հնարքներ. «Կապ»	1
	Մարտավարական հիմնական հնարքներ. «Շամփուր»	1
	Մարտավարական հիմնական հնարքներ. «Պնտառաքաղ»	1
	Մարտավարական հիմնական հնարքներ. «Բաց հարձակում»	1
	Մարտավարական հիմնական հնարքներ. «Կրկնակի շախ»	1
	Մարտավարական հիմնական հնարքներ. «Ծանրաբեռնված խաղաքար»	1
	Մարտավարական հիմնական հնարքներ. «Միջանկյան քայլ»	2
	Մարտավարական այլ հնարքներ. «Ցուգ-ցվանգ»	2
	Մարտավարական այլ հնարքներ. «Միջամտություն»	1
	Մարտավարական այլ հնարքներ. «Տրոյական ձի»	1
	Զինվորային վերջնախաղեր. «Բանալի դաշտեր»	2
	Զինվորային վերջնախաղեր. «Հանդիպակցություն»	2
	Զինվորային վերջնախաղեր. «Թագուհին զինվորի դեմ»	3
	Նավակային վերջնախաղեր. «Նավակը և նախավերջին հորիզոնականի զինվորը նավակի դեմ»	2
	Սկզբնախաղի տեսակներ	4
	Միաժամանակյա խաղ	2
	Մրցաշարեր	2
	Կարգերի լրացում	2
	Հայ անվանի գրոսմայստերները	1
	Տարվա ամփոփում	2
	Ընդամենը	**68**

«ԵՐԵՎԱՆԻ ԵՂԻՇԵ ՉԱՐԵՆՑԻ ԱՆՎԱՆ Հ.67
ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ

ՁԵՌՔԻ ՎԱՐՊԵՏՈՒԹՅՈՒՆ

2022-2023 ուստարի

ԽՄԲԱԿԻ ԾՐԱԳԻՐ

- Նպատակ
- Բովանդակություն
- Վերջնարդյունք

Նպատակ. Հազարամյակներ շարունակ մարդիկ ստեղծել և զարգացրել են ձեռքի արհեստների նոր ձևեր և մեթոդներ՝ մաքրամե, գոբելեն, ասեղնագործություն: Այժմ նորից արդիական են և լայնորեն կիրառվում են տարբեր բնագավառներում: Ավանդական մոտեցումները զուգակցվում են ժամանակակից տեխնոլոգիաներով և ձեռքի արհեստները դառնում են դեկորատիվ-կիրառական արվեստի լավագույն տեսակներից:

Վերջնարդյաունք. Սովորողներ մոտ զարգացնել ձեռքի աշխատանքի հմտությունները և ձևավորել ստեղծագործական միտք ու ճաշակ :

Թեման	նպատակը, խնդիրները	Վերջնական արդյունք
Մաքրամե		
Պատմական ակնարկ մաքարմեի և հանգույցների մասին	«Մաքրամե» անվան ծագումը: Հանգույցների տեսակները:	Կարողանան հյուսել պարզ հանգուց ներ
Հազույցների կիրառման ոլորտները	Հանգույցների կիրառման ոլորտները:	
Հյուսման համար անհրաժեշտ նյութերը, հարմարանքները	Հյուսման համար անհրաժեշտ թելերը, պարանները, օժանդակ նյութերը, գործիքներըև հարմարանքները:	Կարողանան ճիշտ ընտրել անհրաժեշտ թելերը, պարանները, օժանդակ նյութերը, գործիքները և հարմարանքները:
Հանգույցների սխեմատիկ պատկերների ուսումնասիրությունը	Հանգույցների հյուսման տեխնոլոգիան:	Կարողանան կարդալ հանգույցների կատարման սխեմատիկ պատկերները:
Մաքրամեի հանգուույցներ ի հյուսման եղանակները	Քառակուսի, հասարակ, պիկո, հորիզոնական, ռեպսային, ծուղակ, ֆրիվոլիտ, հայկական, ճապոնական, չինական, ժոզեֆինա հանգույցները	Կարողանան կատարել հանգուցները:
Մաքրամեից պարզ աշխատանքի կատարում	Մաքրամեիից իրեր հյուսելու ձևերը, աշխատանքը սկսելու եղանակները	Կարողանան կատարել մաքրամեից պարզ աշխատանքներ:
Հյուսվածքի լայնացման եղանակները	Հյուսվածքի լայնացման եղանակները	Կարողանան լայնացնել աշխատանքը
Հանգույցներից նախշերի ստեղծում	Հանգույցներից նախշերի ստեղծում	Կարողանան հանգույցները կիրառելով ստեղծել նախշեր
Էջանշանի էսքիզ	Էջանշանի էսքիզը, օժանդակ նյութերը և թելերի ընտրությունը	Կարողանան ճիշտ ընտրել էսքիզը և օժանդակ նյութերը
Թելերի քանակի երկարության հաշվարկումն կտրում	Հաշվարկել և կտրել համապատասխան քանակի և երկարության թելեր	Կարողանան ճշիտ հաշվել թելերի երկարությունը
Էջանշանի պարզ նմուշի հյուսում	Էջանշանի պարզ նմուշի հյուսում	Կարողանան հյուսել պարզ էջանշան
Էջանշանին տալ ավարտուն տեսք, ստուգել	Էջանշանը վերջնամշակել, վերացնել	Ստուգել ավարտած աշխատանքի

որակը	թերությունները	որակը և վերացնել թերությունները
Մաքրամեից հյուսել դրամապանակ (էսքիզ)	Մաքրամեից դրամապանակի հյուսման տեխնիկան	Կարողանան մաքրամեից հյուսել դրամապանակ
Դրամապանակի համար ընտրել թելերը,օժանդակ նյութերը	Մաքրամեից դրամապանակի համար ընտրել համապատասխան գույնի, քանակի, երկարության թելեր և օժանդակ նյութեր	Կարողանան ընտրել համապատասխան թելեր դրամապանակի համար թելեր և օժանդակ նյութեր
Մաքրամեից հյուսել դրամապանակ	Մաքրամեից հյուսել դրամապանակ	Կարողանան մաքրամեից հյուսել դրամապանակ
Աշխատանքին տալ ավարտուն տեսք և ստուգել որակը	Աշխատանքին տալ ավարտուն տեսք և ստուգել որակը	Ստուգել աշխատանքի որակը և վերացնել թերությունները
Գոբելեն		
Պատմական ակնարկ գոբելենի մասին	«Գոբելեն» անվան ծագումը	
Գոբելենի տեսակները, հյուսվ առանձնահատկությունները	Աշխատատեղի կազմակերպումը	Ճանաչեն գոբելենի տեսակները, հյուսման առանձնահատկությունները
Անհրաժեշտ գործիքները և սարքավորումները	Գոբելենի նկարի, ֆոնի, թելերի ընտրությունը	Կարողանան կատարել ընտրություն՝ նկարի, ֆոնի, թելերի
Էսքիզի ընտրությունը	Գոբելենի էսքիզը, օժանակ նյութերը և թելերի ընտրությունը	Կարնյութերըողանան ընտրել թելերը և օժանդակ
Հենքով գոբելենի հյուսման տեխնիկան	Հյուսել հենքով գոբելեն, օգտագործելով կարպետագործության տեխնիկան	Կարողանան կիրառել կարպետագործության տեխնիկան հենքով գոբելեն հյուսելիս
Պարզ նմուշի հենքով գոբելենի հյուսում	Պարզ նմուշի գոբելեն	Կարողանան հյուսել պարզ նմուշի գոբելեն
Երկրաչափական պատկերներով գոբելեն	ուիսկան պատկերներովգոբելեն	Կարողանան հյուսել երկրաչափական պատկերներով գոբելեն
Աշխատանքն ավարտել և ստուգել որակը	Պատրաստի գոբելենը վերջնամշակել, վերացնել թերությունները, պահպանելով անվտանգության կանոնները	Ստուգել որակը, վերացնել թերությունները և տալ ավարտուն տեսք
Ասեղնագործություն		
Ժողովրդական գեղարվեստական	Ավանդական գեղարվեստական	Կարողանան տարբերել

արհեստները և հայ վարպետները	ձեռքարհեստները	գեղարվեստական արհեստներր
Ասեղնագործության տեսակները՝ Այնթափ, Մարաշ, Վասպուրական	Գիտելիքներ ասեղնագործության մասին	Կարողանան տարբերել ասեղնագործության տեսակները
Ասեղնագործության համար անհրաժեշտգործիքներն ու հարմարանքները	Ասեղնագործությա ն համար անհրաժեշտ ասեղներ, մուլինե թելերմկրատ, զարդանախշի էսքիզ	Կարողանան ճիշտ ընտրել ասեղնագործության համար անհրաժեշտ ասեղները և թելերը
Զարդակարերի տեսակները	Զարդակարերի տեսակները	Կարողանան տարբերել զարդակարերի տեսակները
Զարդանախշերի տեսակները	Զարդանախշերի տեսակները	Կարողանան տարբերել զարդանախշերը
Զարդանախշերը գործվածքի վրա փոխանցելու տեխնիկան	Զարդանախշը պատճենահանմ անթղթով փոխանցել գործվածքի վրա	Կարողանան զարդանախշերը փոխանցել գործվածքի վրա
Ասեղնագործել պարզ զարդանախշերի	Ձևավորելու կարողությունը	Կարողանան ասեղնագործել պարզ զարդանախշեր
Ասեղնագործելիս պահպանել անվտանգության կանոնները	Ասեղնագործելիս պահպանել անվտանգության կանոնները	Կարողանան ասեղնագործելիս պահպանել անվտանգության կանոնները
	Ընտրել էսքիզը, թելերը,ասեղը, պարզ զարդանախշը	Կարողանան ասեղնագործել պարզ նմուշի թաշկինակ
Աշխատանքն ավարտել և ստուգել որակը	Աշխատանքին տալ ավարտուն տեսք, ենթարկել խոնավաջերմային մշակման	Ստուգել աշխատանքի որակը և վերացնել թերությունները

«ԵՐԵՎԱՆԻ ԵՂԻՇԵ ՉԱՐԵՆՑԻ ԱՆՎԱՆ Հ.67 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ

ՀԱՅԵՐԵՆԻ ԲԱՆԱՎՈՐ ԽՈՍՔԻ ՀՄՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՈՒՄ

2022-2023 ուստարի

Խմբակի ծրագիր

Խմբակում ներկայացված են հետևյալ բաժինները՝

- թեմաներ
- ժամաքանակ
- նպատակ
- վերջնարդյունք

Այստեղ առանձնացված են որոշակի թեմաներ, որոնք համապատասխանում են սովորողների նախասիրություններին, հետաքրքրություններին, պահանջներին:

Առանձնահատուկ ուշադրություն է դարձված սովորողների գիտելիքների, կարողությունների, հմտությունների, բանավոր խոսքի զարգացման վրա:

Շաբաթական՝ 2 ժամ, տարեկան՝ 68 ժամ:

Թեմա- 15 ժամ	**«Ինձ համար դեռևս անծանոթ հայ մեծանուն մտավորական՝ գրող, երաժիշտ, նկարիչ, դերասան...»**
Նպատակ	• Իրազեկել, ծանոթացնել, ճանաչել տալ հայտնի, հայրենանվեր գործ կատարած մեծանուն մարդուն: • Նպաստել տվյալ մտավորականի գործերի առանձնահատկությունների վերհանմանը: • Համապատասխան բառապաշարի, նոր սովորած բառերի , օգտագործման, հոմանիշների գործածման խթանում: • Խոսքային իրադրության մեջ ուշադրություն դարձնել մտքերի ճիշտ շարադասության վրա:
Վերջնարդյունք	• Կարողանալ իմացածը փոխանցել ընկերներին: • Մտապահված նյութը

	ներկայացնել գրական լեզվով: • Շեշտադրել կարևորագույն փաստարկները: • Առանց վերանայելու և կրկնակի պատրաստվելու շարադրել մտքերը: • Հետաքրքրություն առաջացնել ունկնդրի մոտ ծանոթանալու նշված հեղինակի կյանքի և ստեղծագործության մանրամասներին:
Թեմա- 10 ժամ	«Բանավեճ՝ նախապես ուսումնասիրված նյութի շուրջ» (հեռուստատեսային, ամսագրային, գրական կերպարին առնչվող)
Նպատակ	• Կարողանալ ճիշտ ներկայացնել նյութը, տեղեկատվությունը՝ տարբերակելով կարևորը երկրորդականից: • Զարգացնել միմյանց լսելու, լրացնելու, հանդուրժողականության հատկանիշները: • Հարգել միմյանց կարծիքը:

Վերջնարդյունք	• Ձևավորված մշակույթ միմյանց հարգելու, խոսքը լսելու, կարծիքը հաշվի առնելու: • Տեղեկատվության շրջանակներում փոխադարձաբար հարցեր ուղղելու, պատասխանի հետ չհամաձայնելու, համաձայնելու մշակույթի ձևավորում:
Թեմա- 15 ժամ	«Ձեկույց որևէ նորարարական մտահաղացման մասին»
Նպատակ	• Մտքերի անկաշկանդ ձևակերպման հմտություն: • Լսարանի ուշադրության հրավիրում: • Ստեղծարար մտածողության խրախուսում:
Վերջնարդյունք	• Սեփական կարծիքն արտահայտելու համարձակություն: • Սեփական միտքը համոզիչ ներկայացնելու կարողություն:
Թեմա- 13 ժամ **դասարանական** քննարկման հետ **միասին**	«Այց մշակութային կենտրոն. տպավորություններով կիսվելու

	մշակույթ»
Նպատակ	• Զարգացնել դիտողականությունը: • Մշակութային կենտրոնում համապատասխան խոսքային վարքագծի ճիշտ դրսևորման ձևավորում:
Վերջնարդյունք	• Կարողանալ քննարկել տեսածն ու լսածը: • Մեջբերել անծանոթ եզրույթները, բառերը, արտահայտությունները: • Նկարագրել բնագրին, նյութին մոտ բառամթերքով:
Թեմա- 15 ժամ	«Հեքիաթի, պատմվածքի, առակի կամ գիպական այլ ժանրի ստեղծագործության բեմականացում»
Նպատակ	• Հեքիաթի կամ առակի խորքային ընկալում, վերարտադրում: • Կերպարի ճիշտ ներկայացում: • Դրական և բացասական երևույթների ընկալում-քննարկում: • Հիմնական գաղափարի յուրացում գեղարվեստական

	մոտեցմամբ:
Վերջնարդյունք	• Կարողանալ խոսքի միջոցով ընդգծել կերպարների առանձնահատկությունները: • Կարողանալ ըմբռնելի և ուսանելի ներկայացնել նյութը:

Ուսուցչուհի ԱՇԽԵՆ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

«ԵՐԵՎԱՆԻ ԵՂԻՇԵ ՉԱՐԵՆՑԻ ԱՆՎԱՆ Հ.67 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ

ՀԱՅԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

2022-2023 ուստարի

Խմբակի ծրագիր

(շաբաթական՝ 2 ժամ , տարեկան՝ 68)

«**Հայագիտություն**» խմբակի ծրագիրը կազմված է բաժիններից՝

Թեմայի անվանում, ժամաքանակ

Նպատակներ

Խնդիրներ

Վերջնարդյունքներ

Ծրագրում առանձնացված են որոշակի թեմաներ, որոնք համապատասխանում են սովորողների նախասիրություններին ,հետաքրքրություններին ու պահանջմունքների բավարարմանը :

Ո՞վ ենք մենք, որտեղի՞ց ենք սկիզբ առել,ինչպե՞ս ենք անցել մեր ճանապարհը:Ի՞նչն է մեզ պահել,և ի՞նչն է պահելու:Յուրաքանչյուր անհատ պետք՝է·քաջածանոթ լինի ազգի պատմությանն ու արմատներին,հպարտ լինի ազգային պատկանելությամբ,իմանա և կրի քրիստոնեական և ազ-գային բարոյական արժեքները:

Հայագիտությունը խթանում է պետականության ամրապնդմանը, նպաստում ազգային ինքնա-գիտակցության խորացմանը: Դրանով իսկ այն դառնում է հայոց պետականության շուրջ հայերի համախմբման ,երկրի ազգային անվտանգության ապահովման և հայապահպանության վճռական գործոն:

Ազգային հոգևոր արժեքները մեր ժողովրդին հնարավորություն են տվել պահպանելու իր հայ-ռենիքը,հավատը,մշակույթը ,ազգային ինքնագիտակցությունը և պետականությունը վերականգ-նելու գաղափարը:Մեր ազգայինը մեր ժառանգությունն է,և մենք պարտավոր ենք ճանաչել և պահպանել այն անաղարտ ,նրա հիմքի վրա կառուցել նորը՝ժամանակակից աշխարհում դիմագրավելով փորձություններին,կրելով նախնիների և Հայոց եկեղեցու օրհնությունը:

Նպատակ – Հայագիտության գլխավոր նպատակը ծրագրում ընդգրկված բոլոր ուղղությունների զարգացումն է, համընթաց քայլերը համաշխարհային գիտության հետ, հայագիտության նվաճումները հայոց պետականության հետագա ամրապնդմանն ի սպաս դնելը:

Սովորողը իմանալով ազգային արժեքների կարևորությունը ,կարողանում է ճիշտ գնահատել դրանք , դրսևորելով սեր և հարգանք ազգային արժեքների հանդեպ: Սեփական արժեքների շուրջ համախմբվածությունը տվյալ ազգի հոգու զորության ներքին ամրության գրավականն է:

Խնդիրներ- հիմնախնդիրներից են հայրենիքին նվիրված, բարոյական բարձր հատկանիշներով օժտված քաղաքացի ձևավորելը, նրա ազգային ինքնագիտակցությունը բարձրացնելը, ռազմահայրենասիրական դաստիարակությունը, երկրի տարածքային ամբողջականության և հայոց պետականության պաշտպանությանը պատրաստ անհատ կերտելը: Ուշադրության կենտրոնում պետք է լինեն ազգային, նյութական և հոգևոր արժեքները ճանաչելն ու պահպանելը, օտարների կողմից դրանց յուրացումները կանխելը, հնագույն պատմամշակութային հուշարձանները սերունդների համար պահպանելը, դրանք ուսումնասիրելն ու արդի էլեկտրոնային միջոցներով միջազգայնացնելը:

Վերջնարդյունք – սովորողը պետք է կարողանա նշել ազգային և հոգևոր արժեքները՝ կատարելով ընդհանրացում, գնահատել համամարդկային արժեքները, որպես այցեքարտ ներկայանա հայրենիքի սահմաններից դուրս, գիտակցի իր ազգային արժեքների նշանակությունը : Անհրաժեշտ է խորացնել սովորողի ինքնուրույն մտածողությունը, նրանց մտահորիզոնը, նպաստել մտքի, կամքի, հայրենասիրական և ազգային զգացմունքների ամրապնդմանը:

Կրթությունը մարդակենտրոն գործընթաց է. ազգի հիմքը կրթությունն է և ցանկացած լավ, բարի ու արժեքավոր բան, հենց կրթության միջոցով է, որ փոխանցվում է մարդկանց, տարածվում հասարակության մեջ, դաստիարակում մատաղ սերնդին: Կրթության առանցքը արժեհամակարգն է, ցանկացած մարդու համար արժեքային համակարգն այն է, ինչ այդ մարդն ինքն իր համար արժեք է համարում:

Հայ ազգի հատկապես նոր սերնդի յուրաքանչյուր անհատ պետք է քաջածանոթ լինի մեր պատմության մեծերին՝ սկսած Հայկ Նահապետից մինչև Արցախյան ազատամարտի հերոսները, և ճակատագրի ինչ հարվածների էլ ենթարկվենք՝ անաղարտ պահենք մեր ազգային կերպարն ու դիմագիծը, և նրա հիմքի վրա կառուցենք նորը՝ ժամանակակից աշխարհում դիմագրավելով փորձություններին, կրելով նախնիների և Հայոց եկեղեցու օրհնությունը: Անցյալում և այսօր ունեցած արժեքների ճանաչողությունը մեզ կարող է բերել ազգային արժեհամակարգի գիտակցմանն ու գնահատմանը, որը պետք է ձևավավորվի ազգային, հոգևոր-բարոյական ընդհանրականության հիմքի վրա: Այսօր դպրոցում ձևավավորում է սովորողների արժեքային համակարգը ըստ ուսումնական բնագավառների և կրթական աստիճանների, որոնք էլ նպաստելու են մեր պատկերացրած ապագայի քաղաքացու ձևավավորմանը 21-րդ դարում:

	Աստվածաշունչ մատյան /2 ժամ/	ժամ
1	Քրիստոնյաների սուրբ գիրքը: Հին և նոր կտակարան : Արարատը սուրբ լեռ	1
2	Հայկ նահապետ : Հայկի սերունդները	1
	Քրիստոնեություն /6 ժամ/	
3	Քրիստոնեության հիմնադրումը:Հիսուս Քրիստոս :12 աշակերտների ընտրությունը	
4	Իմաստուն խորհուրդներ:10 պատվիրաններ	
5	Աստվածաշնչյան առակներ:«Աղքատ Ղազարոսի առակը»«Տասը կույսերի առակը»	
6	Խորհրդավոր ընթրիք:Լեոնարդո դա Վինչի	
7	Քրիստոնեական եկեղեցին որպես շինություն :Ճարտարապետական կառույց	
8	Աղոթք:Աղոթքի ուժը	
	Եկեղեցի /9 ժամ/	
9	Հայոց եկեղեցու յոթ խորհուրդները	1
10	Եկեղեցական տոներն ըստ խմբերի և տեսակների	1
11	Գր.Լուսավորիչ՝ Առաջին հայրապետ:Գր.Լուսավորչի հաջորդները	1
12	Գրիգոր Նարեկացի «Մատյան ողբերգության»	1
13	Թարգմանիչներ՝Մ.Խորենացի, Եղիշե,Դ.Անհաղթ,Ե.Կողբացի	1
14	Հայոց եկեղեցին հավատի և հայրենիքի պաշտպան	1
15	Կաթողիկոսանիստ Էջմիածինը հոգևոր և մշակութային կենտրոն	1

16	Մյուռոն,մյուռոնօրհնություն: Ծեսեր.	1
17	Այց եկեղեցի: Հանդիպում քահանայի հետ	1
	Արժեքներ /14 ժամ/	
18	Հայոց 12 մայրաքաղաքները: Քաղաքամայր Երևան	1
19	Մշակութային արժեքներ: Հնագիտական հուշարձաններ	1
20	Վանքեր,Դպրության կենտրոններ	1
21	Ազգային և հոգևոր արժեքներ	1
22	Ազգագրություն	1
23	Վիմագրություն	1
24	Հայ հնագիտություն	1
25	Դրամագիտություն	1
26	Ձեռագրագիտություն : Ձեռագրեր և հավաքածուներ	1
27	Հայագիտական հանդեսներ «Բանբեր Հայաստանի» «Գեղարդ» «Շողակաթ»	1
28	Գևորգյան ճեմարան, Էջմիածնի գիտական հոգևորականներ	1
29	Ուսումնական և գիտական հաստատություններ: Լազարյան ճեմարան Գլաձոր. Տաթև	1
30	Վենետիկ: Մխիթարյան միաբանություն	1
31	Ներսիսյան դպրոց, Արմաշի դպրեվանք, գիմնազիաներ,վարժարաններ	1

	Արհեստներ / 6 ժամ/	
32	Գորգագործություն: Կարպետագործություն	1
33	Գինեգործություն	1
34	Կավագործություն	1
35	Խաչքար	1
36	Ծիրան, Ծիրանափող, Նուռ , Խաղող	1
37	Հայկական ասեղնագործություն: Զարդանախշեր	1

	Արվեստագիտություն և համամարդկային արժեքներ / 8 ժամ/	
38	Մանրանկարչություն և հայ գրչագրական արվեստ	1
39	Ճարտարապետություն	1
40	Կերպարվեստ	1
41	Թատրոն, Կինո	1
42	Հայ ազգային երաժշտություն : Կոմիտաս, Ա. Խաչատրյան	1
43	Հայ նշանավոր արվեստագետներ	1
44	Մ. Սարյան , Հ. Այվազովսկի	1
45	Ազգային հերոսներ, Շառլ Ազնավուր, Քըրք Քրքորյան	1
	Հայագիտության նշանավոր կենտրոններ / 4 ժամ /	

46	Մոսկվա, Աստրախան, Վաղարշապատ	1
47	Նոր Նախիջևան, Կալկաթա, Թիֆլիս, Իրանի հայագիտական կենտրոններ	1
48	Կ- Պոլիս, Երուսաղեմ, Վիեննա	1
49	Փարիզ, Լոնդոն, Բեռլին, ԱՄՆ-ի հայագիտական կենտրոնները	1

	Հայագիտական հետազոտության խնդիրներ և ուղղություններ /8 ժամ/	
50	Հայկական հարցը և հայոց ցեղասպանության պատմությունը	1
51	Հայ.-ի պատմական աշխարհագրություն: Հին քարտեզների քարտեզագրություն	1
52	Հայագիտական, պատմագիտական, աղբյուրագիտական ժառանգություն	1
53	Հայկական կալվածքների և պատմամշակութային ժառանգության խնդիրները Թուրքիայում	1
54	Հայրենիք- սփյուռք համագործակցությունը: Հայրենադարձների ինտեգրում	1
55	Հայոց ցեղասպանության ճանաչման համար գոյություն ունեցող գործոնները: Ցեղասպանության հիշողության գործոնը	1
56	Սփյուռքահայ և արևմտահայ գրականության հաղորդակցումը	1
57	Հայ բարեգործական կազմակերպությունները	1
	Հայագիտությանը նպաստող արժեքավոր աղբյուրներ / 11 ժամ/	
58	Մեսրոպ Մաշտոց: Հայոց այբուբեն	1

59	Մեր լեզուն : Ճիշտ հայերենը	1
60	Գրաբար	1
61	Աշխարհաբար : Խ.Աբովյան	1
62	Արևելահայերեն , արևմտահայերեն	1
63	Խոսքի մշակույթ: Բարբառագիտություն	1
64	Հելլենիզմի ազդեցությունը մշակույթի վրա: Գառնիի հեթանոսական տաճարը	1
65	Մհերի դուռ : Սասունցի Դավիթ էպոս	1
66	Հայն ավանդույթների շարունակող	1
67	Հայկական անձնանուններ , ազգանուններ	1
68	Ամփոփում : Կրկնություն	1

ԵՂԻՇԵ ՉԱՐԵՆՑԻ ԱՆՎԱՆ ԹԻՎ 67 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ

ԵՐԳՉԱԽՈՒՄԲ

2022- 2023 ուստարի

Խմբակի ծրագիր

. Նպատակ

. Ուսուցանվող նյութեր

. Վերջնարդյունք

Շաբաթական 4 ժամ, տարեկան 136 ժամ (3-9-րդ դասարաններ)

1. Սովորողների մոտ սեր առաջացնել դեպի խմբերգային երաժշտությունը: Ավելի խորը ծանոթացնել նրա կատարողական գաղտնիքներին: Սովորեցնել ճիշտ և ինտոնացիոն մաքուր երգեցողությանը:
2. Վերջնարդյունքում ունենալ երգչային լայն ձայնածավալ ունեցող երեխաներ, երժշտությունը էլ ավելի ճիշտ ընկալող և այն հավուր պաշաճի ներկայացնող աշակերտներ:

Ամսաթիվ	Ուսուցանվող նյութ	Ժամ
	1 ՀՀ օրհներգ: Ծանոթություն, ունկնդրում	1
	2 Բաժանել բառերը, խմբ. ըստ ձայների	1
	3 Աշխատանք առանձին ձայների հետ	1
	4 Կատարել ստեղծ.-ը և բառերը ամբողջությամբ	1
	5 Էդ. Հովհաննիսյան ՝Երեբունի-Երևան՝ - ը	1
	6 Աշխատանք ճիշտ և մաքուր կատարման վրա (Վերևի նոտաներ)	1
	7 Միացնել ձայները	1
	8 Ամբողջական ստեղծ. կատարում (շտկումներ)	1
	9 Ա. Բաբաջանյան ՝Մեր սիրելի Երևան՝-ը, ունկնդրում, խոսքերի բաժանում	1
	10 Առանձին աշխ. ձայների հետ դաշն. նվագակցությամբ	1
	11 Աշխ. մաքուր երգեցողության վրա	1
	12 Երգի ամբողջական կատարում, ամրապնդում	1
	13 Կոմիտասյան երգեր, ունկնդրում և ընտրություն	1
	14 ՝Սոնա յար՝, խոսքերի և նոտաների բաժանում	1
	15 Ակապելլա կատարում, ցույց տալ յուր. ձայնի կարարումը	1
	16 Երկու ձայների միացում, աշխատանք մաքուր կատարման վրա	1
	17 Ամբողջական ստեղծ. կատարում	1
	18 ՝Լուսնակն անուշ՝ նյութի ծանոթացում	1
	19 Խոսքերի և նոտաների բաժանում	1
	20 Առանձին աշխ. ձայների հետ	1
	21 Ամբողջական ստեղծ. կատարում	1
	22 ՝Անձրևն եկավ՝ ունկնդրում	1
	23 Խոսքերի և նոտաների բաժանում(ակապելլա)	1
	24 Առանձին աշխ. ձայների հետ	1
	25 Երկձայն կատարում	1
	26 ՝Կաբավի գովքը՝ ունկնդրում	1
	27 Խոսքերի և նոտաների բաժանում	1
	28 Առանձին աշխ. ձայների հետ	1
	29 Ամբողջական ստեղծ. կատարում	1
	30 ՝Կալի երգը՝ ունկնդրում	1
	31 Խոսքերի և նոտաների բաժանում	1
	32 Առանձին աշխ. ձայների հետ	1
	33 Ամբողջական ստեղծ. կատարում	1
	34 Անցած նյութերի կրկնություն, ամրապնդում	1
	35 Անցած նյութերի կրկնություն, ամրապնդում	1
	36 Անցած նյութերի կրկնություն, ամրապնդում	1

	Ուսուցանվող նյութ	
37	Անցած նյութերի կրկնություն, ամրապնդում	1
38	Անցած նյութերի կրկնություն, ամրապնդում	1
39	Անցած նյութերի կրկնություն, ամրապնդում	1
40	Անցած նյութերի կրկնություն, ամրապնդում	1
41	Անցած նյութերի կրկնություն, ամրապնդում	1
42	Նոր նյութերի ուսկնդրում, ընտրություն	1
43	Էդ. Հովհաննիսյան ՝Սարդարապատ՝	1
44	Խոսքերի և նոտաների բաժանում	1
45	Առանձին աշխ. ձայների հետ	1
46	Ամբողջական ստեղծ. կատարում	1
47	Ժ. Կարվարենց ՝Քեզ համար Հայաստան՝	1
48	Խոսքերի և նոտաների բաժանում	1
49	Առանձին աշխ. ձայների հետ	1
50	Ամբողջական ստեղծ. կատարում	1
51	Ե. Չարենցի դպր. օրհներգը	1
52	Խոսքերի և նոտաների բաժանում	1
53	Առանձին աշխ. ձայների հետ	1
54	Ամբողջական ստեղծ. կատարում	1
55	Ամանորին նվիրված երգեր	1
56	Ա. Գրիգորյան, ՝Նոր տարի՝	1
57	Խոսքերի և նոտաների բաժանում	1
58	Առանձին աշխ. ձայների հետ	1
59	Ամբողջական ստեղծ. կատարում	1
60	Ռ. Ամիրխանյան, ՝Նոր տարվա հանդես՝	1
61	Խոսքերի և նոտաների բաժանում	1
62	Առանձին աշխ. ձայների հետ	1
63	Ամբողջական ստեղծ. կատարում	1
64	Հայոց բանակին նվիրված երգեր	1
65	Հայոց բանակի օրհներգը, ՝Երազ իմ երկիր՝	1
66	Խոսքերի և նոտաների բաժանում	1
67	Առանձին աշխ. ձայների հետ	1
68	Ամբողջական ստեղծ. կատարում	1
69	Ա. Մարտիրոսյան, Հայոց բանակի երգը՝	1
70	Խոսքերի և նոտաների բաժանում	1
71	Առանձին աշխ. ձայների հետ	1
72	Ամբողջական ստեղծ. կատարում	1
73	Ա. Բաբաջանյան. ՝Տղերքը չկան՝	1
74	Խոսքերի և նոտաների բաժանում	1

Ամսաթիվ	Ուսուցանվող նյութ	Ժամ
	75 Առանձին աշխ. ձայների հետ	1
	76 Ամբողջական ստեղծ. կատարում	1
	77 Անցած նյութերի կրկնություն, ամրապնդում	1
	78 Անցած նյութերի կրկնություն, ամրապնդում	1
	79 Անցած նյութերի կրկնություն, ամրապնդում	1
	80 Անցած նյութերի կրկնություն, ամրապնդում	1
	81 Անցած նյութերի կրկնություն, ամրապնդում	1
	82 Լ. Գալստյան ՝Հանուն մեր ազգի՝ հեղինակային երգ	1
	83 Խոսքերի և նոտաների բաժանում	1
	84 Առանձին աշխ. ձայների հետ	1
	85 Ամբողջական ստեղծ. կատարում	1
	86 Լ. Գալստյան ՝Շուշի՝ հեղինակային երգ	1
	87 Խոսքերի և նոտաների բաժանում	1
	88 Առանձին աշխ. ձայների հետ	1
	89 Ամբողջական ստեղծ. կատարում	1
	90 ՝Մի փափուկ, փոշոտ ճամփա՝ հեղինակային երգ	1
	91 Խոսքերի և նոտաների բաժանում	1
	92 Առանձին աշխ. ձայների հետ	1
	93 Ամբողջական ստեղծ. կատարում	1
	94 Ա.Լուսինյան ՝Իմ ուսուցիչ՝	1
	95 Խոսքերի և նոտաների բաժանում	1
	96 Առանձին աշխ. ձայների հետ	1
	97 Ամբողջական ստեղծ. կատարում	1
	98 Ռ. Պետրոսյան ՝Իմ ուսուցիչ՝	1
	99 Խոսքերի և նոտաների բաժանում	1
	100 Առանձին աշխ. ձայների հետ	1
	101 Ամբողջական ստեղծ. կատարում	1
	102 Ա. Լուսինյան ՝Սիրուն Երևան՝	1
	103 Խոսքերի և նոտաների բաժանում	1
	104 Առանձին աշխ. ձայների հետ	1
	105 Ամբողջական ստեղծ. կատարում	1
	106 Ազգային և ժող. երգեր, ունկնդրում և ընտրություն	1
	107 ՝Հոյ նազան՝-ը	1
	108 Խոսքերի և նոտաների բաժանում	1
	109 Առանձին աշխ. ձայների հետ	1
	110 Ամբողջական ստեղծ. կատարում	1
	111 ՝Խնկի ծառ՝-ը	1
	112 Խոսքերի և նոտաների բաժանում	
	113 Առանձին աշխ. ձայների հետ	

Ամսաթիվ	Ուսուցանվող նյութ	Ժամ
	114 Ամբողջական ստեղծ. կատարում	1
	115 Լեպո լե-լե-ն	1
	116 Խոսքերի և նոտաների բաժանում	1
	117 Առանձին աշխ. ձայների հետ	1
	118 Ամբողջական ստեղծ. կատարում	1
	119 Երկու երգերի միացում	1
	120 Անցած նյութերի կրկնություն, ամրապնդում	1
	121 Անցած նյութերի կրկնություն, ամրապնդում	1
	122 Անցած նյութերի կրկնություն, ամրապնդում	1
	123 Անցած նյութերի կրկնություն, ամրապնդում	1
	124 Տարեվերջյան հաշվետու համերգի նյութերի ընտրություն	1
	125 Տարեվերջյան համերգի նախապատրաստական աշխատանքներ	1
	126 Տարեվերջյան համերգի նախապատրաստական աշխատանքներ	1
	127 Տարեվերջյան համերգի նախապատրաստական աշխատանքներ	1
	128 Տարեվերջյան համերգի նախապատրաստական աշխատանքներ	1
	129 Տարեվերջյան համերգի նախապատրաստական աշխատանքներ	1
	130 Տարեվերջյան համերգի նախապատրաստական աշխատանքներ	1
	131 Տարեվերջյան համերգի նախապատրաստական աշխատանքներ	1
	132 Տարեվերջյան համերգի նախապատրաստական աշխատանքներ	1
	133 Տարեվերջյան համերգի նախապատրաստական աշխատանքներ	1
	134 Տարեվերջյան համերգի նախապատրաստական աշխատանքներ	1
	135 Տարեվերջյան համերգի նախապատրաստական աշխատանքներ	1
	136 Տարեվերջյան հաշվետու համերգ	1

«ԵՐԵՎԱՆԻ ԵՂԻՇԵ ՉԱՐԵՆՑԻ ԱՆՎԱՆ Հ.67 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ

ՄՇԱԿՈՒՅԹԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

2022-2023 ուստարի

«Մշակույթի պատմություն» խմբակի ծրագիր

«Մշակույթի պատմություն» խմբակի ծրագիրում ներկայացված է հետևյալ բաժինները՝

1. Թեմայի անվանումը, ժամաքանակը
2. Նպատակները
3. Խնդիրները
4. Վերջնարդյունքները
5. Բովանդակությունը

Ծրագրում առանձնացված են որոշակի թեմաներ, որոնք համապատասխանում,են սովորողների նախասիրություններին, հետաքրքրություններին ու պահանջմունքներին:

Ծրագրում նշված է ընդհանուր ժամաքանակը ուսումնական տարվա համար, թեմայի վերնագիրը, տրամադրվող ժամանակը,նպատակները, ակնկալվող վերջնարդյունքները՝ հիմնական շեշտը դնելով սովորողի գիտելիքների, կարողունակությունների ու հմտությունների զարգացման վրա:

«Մշակույթի պատմություն» առարկա ծրագիր

(շաբաթական՝ 2 ժամ, տարեկան՝ 68 ժամ)

Ներածություն

Բաժին 1 նախնադարյան արվեստ (2 ժամ):

Նպատակը

Ծանոթանալ նախնադարյան արվեստի նմուշներին, իմանալ հայնագործությունների և ուսումնասիրությունդրի մասին, ճանաչել Հայկական բարձրավանդակի հուշարձանները:

Խնդիրներ

Ընկալել տարածության մեջ գտնվող նախնադարյան արվեստի նմուշները,կատարել համեմատականներ:

Վերջնաարդյունք

Կկարողանա հիմնավոր պատկերացում տալ նախնադարյան արվեստի մասին և ներկայացնել Հայկական բարձրավանդակի հուշարձանները:

Բաժին 2

Հին աշխարհի արվեստ (7 ժամ)

Նպատակը

Ծանոթանալ եգիպտական արվեստի հետ,տալ պատկերացում մ.թ.ա. ի՞նչ է տեղի ունեցել մեր մոլորակի արևմտյան կիսագնդում,իմանալ շումերաաքքադական և բաբելոնյան մշակույթի հիմքը:Ծանոթանալ հայկական լեռնաշխարհի ամենահին պետության հետ:

Խնդիր

Ինքնուրույն կատարել վերլուծություն հին աշխարհի արվեստի մասին,գնահատել մշակույթի դերը դեռ մ.թ.ա. :

Վերջնաարդյունք

Կարողանա բացատրել մշակույթի վերելքի պատճառները,կապ հաստատել Արևելքի,Միջագետքի և հայկական հնագույն պետության միջև:

Բաժին 3

Անտիկ աշխարհի արվեստը (6 ժամ)

Նպատակը

Ուսումնասիրել հնագիտական հայտնագործությունները,ծանոթանալ հունական դիցարանի,աստվածների պանթեոնի հետ,ուսումնասիրել հելլենիզմը,բացահայտել պատմական փաստերի,երևույթների իմաստն ու էությունը:

Խնդիրներ

Վերլուծել հելլենիզմի դերը Հայաստանում,գնահատել Հունաստանի արվեստը ժամանակի մեջ,կատարել ճիշտ և հիմնավոր եզրահանգումներ:

Վերջնաարդյունք

Ընդգրկում և ընկալում անտիկ աշխարհի մասին,ամբողջական պատկերացում արվեստի ձեռքբերումները անտիկ աշխարհում:

Բաժին 4

Միջնադարյան արվեստ (5 ժամ)

Նպատակը

Սովորողներին ծանոթացնել մանրանկարչության ծագմանը և զարգացմանը, հայտնի մանրանկարիչների աշխատանքներին,և քրիստոնեական գաղափարների ազդեցությունը միջնադարյան արվեստի վրա:

Խնդիրներ

Ընդգծել հայկական արվեստի բարձր վերելքի դերը միջնադարում:

Վերջնաարդյունք

Այցելություն մատենադարան,յուրովի արվեստի ընկալում:

Բաժին 5

Վերածննդի արվեստը (11 ժամ)

Նպատակը

«Վերածնունդ» տերմինի բացահայտումը,պատմական նախադրյալները, Վերածննդի մարդասիրական գաղափարները:

Խնդիրները

Ծանոթանալ իտալական վերածննդի խոշոր ներկայացուցիչների հետ,պատկերացում կազմել նրանց արվեստի մասին:

Վերջնաարդյունք

Կարողանալ ամբողջական կարծիք ունենալ արվեստագետների աշխատանքների վերաբերյալ,սլայդների միջոցով ներկայացնել վերածննդի դարաշրջանը:

Բաժին 6

17-18 դդ արվեստը (7 ժամ)

Նպատակը

Կզարգանա պատկերացումը եվրոպական արվեստի մասին,ձեռք կբերեն գիտելիքներ այս ժամանակաշրջանի ստեղծագործողների մասին:

Խնդիրը

Ծանոթանալ ստեղծագործությունների բովանդակության հետ:

Վերջնաարդյունքը

Կարողանալ նախագծային աշխատանք ստեղծել եվրոպական արվեստի շուրջ:

Բաժին 7

Եվրոպական արվեստը 18-20 դդ (14 ժամ)

Նպատակը

Ծանոթանալ եվրոպական արվեստի՝ իմպրեսիոնիզմի և պոստիմպրեսիոնիզմի հետ,իմանալ գաղափարախոսությունը,ծանոթանալ առաջին խմբակներին:

Խնդիրները

Ընկալեն,թե ինչպես իմպրեսիոնիզմը դարձավ արվեստագիտական տերմին և անվանվեց իմպրեսիոնիզմի դարաշրջան:

Վերջնաարդյունքը

Կարողանան ներկայացնել տարածության մեջ իմպրեսիոնիզմի և պոստիմրեսիոնիզմի պատկերման հիմունքները:

Բաժին 8

Հայկական արվեստը 19-20 դդ (12 ժամ)

Նպատակը

Սովորողները կծանոթանան հայկական արվեստի մշակույթի կարևորագույն փաստերին,գործիչներին,կհասկանան հայկական մշակույթի վերելքի պատճառները:

Խնդիրները

Ընդգրկուն ծանոթանալ մշակույթի ընդհանուր գծերին և առանձնահատկություններին:

Վերջնաարդյունքը

Կարողանա գնահատել մշակույթի դերը հայապահպանության և ազգային հոգևոր արժեքների հարստացման գործում:

Բաժին 9

4 ժամ

Այցելություն Ազգային պատկերասրահ (2 ժամ)

Դպս 66-68 Ամփոփում (2 ժամ)